


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien  
ARCHALOUYCE  
(EGYPTE) LE CAIRE



ՊՈՅՏԱՆԵՐ

Ն. Բ. ԳՅՈՍ  
Տարեկան գրե-պշ 30  
ԱՐՏԱՍՄԱՆ  
Տարեկան փրակ 10

Ռամանյոզի ՅԱԵԼՈՒՄ Անու փոխառէն վնասուի գերծ պիտի ըլլան.

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՄԻՈՒԹԵԱՆ

Թե՛ ԱՐՇԱԼՈՍՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքին ինքնուրոյն հասարակական կ'ընդունանք հասարակական իրաւունքներու Մասնակցութիւն, որ է՝

ԳԼՈՒԿՈՒ ՓՈՒՍԵՆԵԱՆ

Ձի հրատարակուած ձեռագրերն են չե՛ն սրուի:

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ:

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագրերը ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ՎԱՐԹՈՒՅԻՆ ԿՈՉՈՒՍԸ  
ԵՒ  
ՄԵՐ ՎԱՐԹՈՒՅԻՆԵՐԸ

Մարդկային ազգի կրթական շրջանակին մէջ ամենամեծ, ամենանախնայական և ամենազոտարին պաշտօնն է վարժուչիին պաշտօնը:

Ի պարզին սեմէն ներս՝ նա երկրորդ մայր մըն է. մայր մը՝ որուն օգնութեան կը կարօտին բազմաթիւ ծնողներ, իրենց աղջկանց դաստիարակութեան գործին մէջ. մայր մը՝ որմէ հարկաւոր աղջկաններ, իրենց մտքի մշակման, հոգւոյ աշխատանքի և բարոյական անբարեկաման ստատարող սերմեր կը խնդրեն:

Ինչպէս որ, կոչու ու անկերպարան ոսկի կտոր մը ոսկերիչին ձեռքին մէջ փայլուն և գեղեցիկ զարդերու կը փոխուի, նոյնպէս ալ մտային և հոգեկան անորոշ վիճակի մէջ գտնուող աղջկաներ, վարժուչիին հսկողութեան տակ և անոր ջանքերուն շնորհիւ, իրական սեռի մէջ մէկ պարճանքները, գոհարկները կը դառնան կամ աւելի ճիշդը՝ պէտք է դառնան:

Այսօր՝ եւրոպայի քաղաքակրթութեամբ և բարոյական բարձր մակարդակի տէր երկրներէն մին, Չեխոսլոակիան, իր իրական սեռի մաքուր և իտէալի դաստիարակութիւնը, մայրերու աղջկանց օգտին շեշտաւոր անհամար խնամքներն աւելի, վարժուչիին անխնայ աշխատութեան, անբացատրելի ջանքերուն և գովելի անձնուրացութեան կը պարտի:

Մայրեր՝ զբաղած անական անհասանում գործերով, անկարող են իրենց ժամանակին մեծ մասը աղջկանց դաստիարակութեան նուիրել. ո՞վ պիտի կրնայ ուրեմն ստանձնել այն վսեմ պաշտօնը:

Վարժուչիին:

Դաստիարակութիւնը, ահա բառ մը՝ որուն բուն իսկ իմաստը չենք հասկցած, հայերս, ամեն տեղ և ժամանակի զանազան շրջաններու մէջ: Դաստիարակել, չի՛ նշանակեր աղջկանց արտաքին քաղաքավարութիւն մը հարցադրել, եւրոպական մէկ քանի լեզուներ և ձեռագործ սորվեցնել. դաստիարակել, ըսել է աղջկանց սրտին մէջ ինքնազիտակցութեան, արժանապատուութեան,

թեան, այսինքն մարդկային բանականութիւնը յատկանշող երկու ամենէն էական զգացումներու սերմերը հաստատել, աղջկանց ներշնչել կամքի, կորովի, յարատեւութեան զաղափարը, մէկ խօսքով պատրաստել մայր մը, կեն մը՝ որ իր անկրօն նկարագրով կարենայ կեանքի դժուարութեանց, մարդկաներուն, դժբաղդութեանց յաղթահարել, ճակատագրական խաչը ուսին՝ բարձրանալ Գոգոթայ, պարպել դառնութեան բաժակը իր ամուսնոյն, զաւակներուն և իր կենաց գոյութեան պայքարը մղելով, եթէ գոնեակ բազմ զինք այդ հարկին մէջ ձգէ...

Եւ հաւատարկ վարժուչիին մը բուն իսկ կոչումն ու պարտականութիւնը՝ Աւա՛ղ, սակայն մեր վարժուչիները մինչև ցարգ սալօնի աղջկաներ միայն տալին մեզի:

Կարծես անոնք չի տեսնելով հայուն ճակատագրական հալածանքները, տառապանքները, մահն ու սովը, չէին մտածեր պահ մը թէ՛ Հայկայ այս տարաբաղ զաւակներուն արիւնջուայ վէրքերուն վրայ սպեղանի դնող վժռութեան քոյրերու պէտք ունենինք. կամքի աննկուն նկարագրի տէր, և կենաց պայքարին գրօշը պարզելու կարող կիներու կը կարօտէինք ու իրենց զաւակաց, արիւթեան և վրէժխնդրութեան կամքը խմչնող մայրերուն անհրաժեշտութիւնը կ'զգայինք, և ոչ թէ՛ կակուղ փետուրէ բարձրու վրայ ընկողմանած՝ վէպերու հաւաքածոյ մը ձեռքերին, որուն տաղտուկը երեւակայութեամբ և երազներով փարատելու սիրահար՝ քնքու զօրութեան և նազելի տիկիներու գոյութեան կը բաղձայինք:

Գաղթականութեան օրերէն ի վեր, արտասահմանի մէջ, ուր տեղ որ հայութիւնը բաւական մեծ գիրք մը չինած է, հոն պակաս չեն եղած աղջկանց նախակրթարաններ:

Սակայն դժբաղդաբար, այն նախակրթարանները աւելի ծառայած են մեր աղջկաները օտարացներու, այլասեռելու՝ քան թէ աւանդ մէջ հայկական զգացումներ արձարծելու: Տեսէ՛ք թէ ինչպէս:

մէկ մանկավարժութեան չեն եղած և կամ չեն, և իրենց դիտութիւնը բաւական սահմանափակ է: Սակայն այս չէ կարող երբէք անոնց արժանիքը խնդրելու, եթէ անոնք արտասահմանի մէջ, եւրոպական բարքերու թեթեւօլիկ և պախարակելի կողմերը ընդգրկելով մեր աղջկանց առջև վատ օրինակներ չի հանդիսանան:

Մեր վարժուչիները չեն դիտեր թէ՛ իրենց պաշտօնը աւելի կը կայանայ համեստ ձևերու, դիմագծական ազնիւ արտայայտութեանց և բարի օրինակներու մէջ, քան թէ՛ պոսալու, կանչելու, յանդիմանելու:

Մտաղ աշակերտութիւնը, որոնց մէջ տակաւին որոշ նկարագիր մը չէ կազմուած, կը նմանին լուսանկարի ապակիներու, որոնք իրենց դիմացը դանուող անձը կամ երբ իր ամբողջութեամբ կ'ընդունին: Հետեւաբար՝ վարժուչիները լաւ գիտնալու են թէ՛ աշակերտութիւնը իրենցմէ միայն ուսմունք չէ որ կ'ստանան՝ այլ նաև կ'որդեգրեն անոնց արտաքինը, նիստ ու կացը, խօսուածքը և ինչ: Մանուհիները այն ատեն վարժուչիին խօսքերուն, յորդորներուն, խրատներուն՝ ահանջ կը դնեն՝ երբ որ ան իր խօսածին համապատասխան օրինակներ չոյց տայ. կարեւոր կէտը այս է:

Վերջապէս համառօտելով վարժուչիները պէտք է նուիրուին իրենց գործին՝ ոչ թէ ապուստին հողալու (ինչ որ շատերուն նպատակն է) այլ իրական սեռին ազնուացման աշխատելու համար: Անոնք պէտք է գիտնան մասնաւոր ուղղութիւն մը տալ իրենց յանձնուած աղջկանց սրտին, մաքրին, զգացմանց. թափանցել անոնց սրտին մինչև ամենէն խոր խաւերուն, գրաւել սանուհիներու սրտերը, վստիկ անոնց վրայ գուրգուրալով և անոնցմէ սիրուելով է որ պիտի կարողանան ձեւել, կաղապարել անոնց դիտաւորութիւններն ու բնաւորութիւնները:

Դժբաղդաբար շատ քիչ ունինք այսպիսի վարժուչիներ:

ԱՍՈՂԻԿ

ՆԱՄՍԿԱՍՏՈՒՓ

Աղէքսանդրիա Տ. Ս. Գ. - Ձեր երկրորդ նամակին կ'սպասուի: Ձեր նախորդ նամակին պարունակութիւնը ճիշդ է:

ՌՈՒՍԻՈՅ ԶԱՐԸ

ՎԵ՛՛ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ԿԱԹ. ՀՐՈՂԱՐՏԱԿ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Առաւելագոյն օժանդակ շնորհիւ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ Ամենայն Ռուսաստանի, Մոսկովայի, Կիեվի, Վլադիմիրի, Նովոքոթի, Թագաւոր Կազանի, Թագաւոր Աստրախանի, Թագաւոր Լեհաց, Թագաւոր Սիբիրի, Թագաւոր Տաւրեան գերսոնէսի, Թագաւոր վրաց, Թագաւոր Պսիօլի և Մեծ Իշխան Մոսկովայի, Լիտվայի Վոլինի, Պոդոլի և Ֆինլանդիայի, Իշխան Էստլանդիայի, Լիվլանդիայի, Կուրլանդիայի և Սեմիգալի, Տաւրգոյի, Բեւոստոյի, Կորէլի, Տիբերի, Իւզոյի, Պերմի, Վեստօկայի, Բուրգարիայի և այլոց, Թագաւոր և Մեծ Իշխան Նովոքոթի, ներքին երկիրների, Չերնիգոլի, Բեալանի, Պոլոցկի, Բոստոլի, Եարոսլաւի, Բեւոստոյի, Ուզոբոկի, Օբոբոկի, Կոնդիյսկի, Վիսեբոկի, Մոսկովայի և բոլոր հիւսիսային երկրների Հրամայող և Թագաւոր Իվերիական, Գարթալիական և Կարաբաղիական երկրների և Հայկական նահանգի, Չերկասեան և Լեռնային իշխանների և այլոց Ժառանգ Թագաւոր և Տէր. Թագաւոր Թուրքեստանի, Ժառանգ Նովոքոթիայի, Հէրցոգ Շլէզվիգ-Հոլշտէյնի, Ստորմարկի, Արամարսէնի և Օլդէնբուրգի և այլն, և այլն, և այլն:

Անսալով հայ ժողովրդի ներկայացուցիչների մեծամասնութեան ցանկութեան, որ արտայայտվեց Ելմիածնում 1908 թվի Նոյեմբերի 1-ին, Մենք հաստատում ենք Կոստանդնուպոլիսի հայ-լուսաւորչական պատրիարք արքեպիսկոպոս Մատթէոս Իգմերլեանին՝ Ելմիածնի պատրիարքի Ամենայն Հայոց Կաթողիկոսի աստիճանում և՛ յանձնարարելով նրա առանձին հոգացողութեան ճշգիւ պահել ներկայումս Կայսրութեան մէջ ներգործող և այսուհետ թիւները՝ հայ-լուսաւորչական եկեղեցու գործերը կառավարելու մասին՝ հաստատ յոյս ենք տածում, որ այս պատրիարքը նախանձայն գլուխամբ գուն կը գործէ արդարացին և Մեր այս Կայսրական վր-



տամ են . այդ ուժերը մեր կեանքին թշնամիներն են . կուզեն այս ցեղին ուժը կարողութիւնը ցամքեցնել . Հեռի մենէ յուսահատութիւնը : Դարեր կը նային մեր վրայ , և այդ դարերուն մէջ որչափ հաւածուած օրեր անցուցինք , որչափ տառապեցանք . բաւական է յիշել եօթներորդ դարու ճինկիզխանի , Ալիսալանի , Լէնկիթիմուրի վայրագ հալածանքները . դահիճներ մեր կեկեցեցին հիմերը . քանզի կուզէին մեր եկեղեցիին հետ մեր կեանքն այլափոխել կուզեն . Հալական անարատ կեանքով մնաց հայ Բիմը , անարատ կը հասնի մեր ձեռքը , անարատ յանձնենք մեր յաջորդներուն : Վրէժխնդրութիւնը , մուկեռանդութիւնը մեր վրայ չի բերենք . ասով միայն կրնայ մեր գոյութիւնը երաշխաւորուի :

**Ս . ՊԱՏՐԻԱՐԿԸ**

Դատական նախարար նէճմէտտին պէյ՝ փոխադարձ այցելութիւն տրւած է Ս . Պատրիարքին , և շնորհաւորած է Դուրեան Արքայանի ընտրութիւնը :

Խօսակցութիւնը կիւրիկոյ աղետներուն շուրջը դառնալով՝ նէճմէտտին պէյ յայտնած է թէ՛ շատ զգածուած է այդ պէպքերէն , որոնց դարձանին վրայ մտածել պէտք է :

Ներքին Գործոց նախարար Ֆէրիտ բաշա ալ այցելութիւն տուած է Ս . Պատրիարքին :

Շնորհաւորութեանց սովորական բանաձևերէն յետոյ , Ն . Ամենպատուութիւն կիւրիկոյ դէպքերու մասին խօսած է հեռեկալ կերպով .

— « Բաշա՛ , արդեօք ինչո՞ւ համար դատաւարութեան Ատանայի Առաջնորդը 101 տարուան . ինչ իրաւամբ պատերազմական ատենի առջև հանուեցաւ Հաճընի Առաջնորդը . ինչո՞ւ կառավարութիւնը չի ճանչնար Պատրիարքարանի իրաւասութիւնը , միթէ՛ գործադիր իշխանութիւնը պէտք չէ՞ որ նախ Պատրիարքարանի դիմէր և անոր տեղեկացնէր իր այդ կարգադրութիւնը՝ քանի որ կրօնաւորները պատրիարքարանի իրաւասութեան տակն են և այս իրաւունքը մեզի տրուած է տարիներէ ի վեր : Նիթէ՛ չ՛ պիտի յարգուին մեր ազգային իրաւունքները և կառավարութիւնը դժուարութիւններ պիտի յարուցանէ , և սչեմ՝ կրնար այս պայմաններու մէջ պատրիարքութեան պաշտօն վտարել . պէտք է վերջ մը տրուի այս կարգադրութեանց , որովհետեւ հանրային կարծիքը պիտի վրդափի : »

Ֆէրիտ բաշա իրատունք տուած է Ս . Պատրիարք հօր բարբառին և յայտնած է թէ՛ Առաջնորդական խնդիրներուն առթիւ արդէն հարկ եղած հրահանգները տուած է Ատանայի պատերազմական ատենին :

**ՅԱՆՉՆՈՒՄ**

Պօլսական թերթերը կը ծանուցանեն թէ՛ Մերսինի Անգլ . Հիւպատոսարանը ապաստանած հինգ հայերը Պատրիարքական Ատենին յանձնելու հրաման եկած է Անգլ . կառավարութեանէն : Յիշուալ թերթերը կ'ըսեն թէ՛ այդ հայերը զէնք բաժներ են ժողովրդեան , պայտնապէս ականներ բացեր և անոնց մէջ Տինամիթ , Պոմպա և Գումպար

չինել տուեր են , Դրամ բաժներ և Զարգին օրը յարձակման առաջին նշանը տուեր են եղեր : (Այս առիթով թերթերը պէտք է գիտնալ թէ՛ բացարձակապէս շինծու՝ և ձրի զրպարտութիւններ են . Մ . Խ . )

**ԵՐԵՎԱՆ . ԺՈՂՈՎ**

Պօլսոյ կեդր . վարչութեան Ազգ . Երեսօ . Ժողովը՝ նախագահութեամբ Ս . Պատրիարք հօր նիստ գումարած է Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ :

Ժողովը լսելէ յետոյ Ազգ . վարչութեան Գաղաք ժողովոյ կողմէ Երեսօյի կեանքէն տուած բացատրութիւնները ինչ ինչ այժմէական խնդրոց վրայ , Երեսօյի խնդիրը ձեռք առած է և ըստ առաջարկի Ս . Պատրիարք հօր , Տ . Յարութիւն Ս . Պատրիարք Վեհապետեանի հրատարակուած մէկ կողմ դրուելով՝ անոր օգնական մը նշանակելու վրայ որոշում կայացած է , սակայն ժողովականաց հետզհետէ մեկնման պատճառաւ , յաջորդելու թողուած Պատրիարքական օգնականի ընտրութիւնը :

**ՀԻՄՆԱՐԿԷՒԹ**

Մեծանուն բարերար Պ . Ա . զէքսանդր Մանվաչեանի հաշուով կառուցուող Թիֆլիզի ներքեան հայոց Հոգևոր Դպրոցի շինութեան հիմքը կը ձգուի նորին Վեհապետութեան ներկայութեամբ :

**ՁԻՆ . ՏՈՒՐԿ**

Սղիթի Ս . Առաջնորդը Տ . Կորիւն վարդապետ Սրապիան՝ Պէճըրքը անկերիէի դանձման խտուածութեան հետեւ զէժմ հեռապրաւ ըզոքած է Օսմ . Խորհրդարանին :

Բրիտանիայ երեսփոխանները վիճաբանութեան մէջ պահանջած են բոլորովին շնչել Պէճըրքը անկերիէն : Որոշումը յետաձգուած է :

**ԿՐԻ . ՆԱԽԱՐԱՐ**

Կրթական նախարարը այցելութիւն տուած է Ս . Պատրիարքին և Ն . Յարգնութիւն հարցուցած է նախարարին թէ՛ զինուորագրութեան օրինագծին մէջ « մի՛միայն պաշտօնական վարժարանները պետական Պաշտօնական մէջ պիտի կրնան գործածուիլ » պարբերութեանէն ի՞նչ հասկնալու է և ո՞ր դպրոցները օրակէլ կուզուի : Նախարարը պատասխանած է թէ՛ Իստրիլի ( երկրորդական ) աստիճանէն վեր ելող Պէճըրք վարժարանները պաշտօնական պիտի ճանչուին :

Երբ Ս . Պատրիարքը զիտել տուած է թէ՛ Հայոց բարձրագոյն վարժարանները ու չըլանաւարտները մեծապէս պիտի տուժեն , նախարարը յայտնած է թէ՛ անոնք ալ պահանջուած քննութիւնը տալով և կամ պետական պաշտօնական վարժարանի մը ընթացքը աւարտելով կրնան պաշտօնի կոչուիլ :

**ՊԱՊԻԿԱՆ ԷՖ .**

Օսմ . Խորհրդարանի կողմէ Ատանայի զոհուած Յակոբ Էֆ . Պոպիկեանի նկատմամբ տեղւոյն Միւրթի զանգատ յայտնած ըլլալով , Մահմուտ Շէվքէթ բաշա հեռադրաւ յանձնարարած է որ փոխանակ ասու ան ամբաստանելու , անաչառութեամբ և անկողմնակալութեամբ աշխատին յանցաւորները երևան հանելու համար :

ՄԻՆԱՍ ԶԵՐՈՉ  
Ազգ . Երեսօ . Ժողովի Ատենապետ Մինաս Էֆ . Չերաղ . որ Վեհ . Հարապետին կ'ընկերանար , Գէորգեան ձեռնարանին Տեսուչ նշանակուած է :

**ՆՊԱՍՏ**

Վեհ . Հայրապետը ի նպաստ Ատանայի արկածախնդրուն 30 ոսկի զրկած է :

**ՊՍ . ԱՏԵԱՆԸ**

Ատանայի Առաջնորդ Մուշեղ Եպ . Մահմուտ Շէվքէթ բաշային հեռագիր մը ուղղելով , մերժած է Ատանայի ժողովրդեան ապստամբ ըլլալու զրպարտութիւնը , յայտնելով միանգամայն սր՝ պատրաստ է արդարադատ տեսնի մը առջև դատուելու՝ իր մասին եղած ամբաստանութեանց համար :

Տ . Մուշեղ Եպ . յիշատակագիր մ'ալ զրկած է Սրբազան Պատրիարքին :

**ՌԻՐ ՄՆԱՑ**

**ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ**

Քանի մը օր առաջ՝ բոլոր անցած փողոցներու պատերուն վրայ փակցուած կը տեսնէի հայ վիճակահանութեան մը հրապարակ հանուելու ազդարարութիւնները , որոնց ներքեւ կային նաեւ ապագայ ամսերուն ՆՄՈՅՆԵՐԸ :

Տասնեակ մը եւ աւելի տարիներէ հետէ խորունկ քունի մէջ թաղուած մեր ազգայինը , ուր ուրեմն արթննալով , շարժական 30 000 թեւերէ բաղկացուալ ի նպաստ Աղքատախնամին վիճակահանութիւն մը կ'ազմակերպած ըլլալին կ'զգարարէին այդ միջոցով : Բայց ինչ որ ամենէն աւելի ուշադրութիւնս պիտի սոյն ձեռնարկին մէջ , այն էր՝ շահող պարզեւնեւորուն էօզպէթիլի Պալլաճեան զբամառունէն վճարուելու պարագան :

Պալլաճեան զբամառունը՝ որ այժմ շատ աչքի զարնող եւ այնչափ կարեւոր դիրք մը զբաղեցնէ Երեսօյի հրապարակին վրայ , վիճակահանութեան մը ազդուակները յանձն առած ըլլալուն համար՝ կրկնակի շնորհաւորութեան արժանի գտայ , ուստի հանդիպումի մը մէջ , հարցախերելու փոփոք չ'կրցայ զպղի :

— Ինչպէս . դուք այս դժուարին գործը . . . :

— Ինչ ընէի . Աղքատախնամին անգամներէն , Ազգային Առաջնորդարանի շրջանակէն եւ մանաւանդ վիճակահանութիւնը ստանձնող Տիար Սարգիս Միսախիւրեանի՝ թախանձանքներուն սեղի տալով , եւ միւս կողմէ՛ ազգին ալ օգուակար ըլլալու փոփոքէն մը ընտելու ընդունեցի . . . :

Սոյն յայտարարութեան վրայ երբ կը պատրաստուէի այնչափ նշանակելի օրտակարութեան մը համար հրապարակային շնորհակալիք մը յայտնել Ս . Պալլաճեան էֆէնտիլի , զարմանք կը տեսնեմ թէ՛ հակառակ եղած ծանուցմանց՝ սակաւին հրապարակին վրայ ցոյց գրուած նմոյն նոյններուն հետք անգամ չ'երեւար , այսինքն վաճառում սկսած չէ :

Ու կը մտածեմ ինքնիրենս . եթէ այս իմ ճանչցած ու սերտած ազգայիններս են , անպատճառ Աղքատախնամին եւ Ազգ . Ժողովոց մէջ փոքր ճախար մը գոյութիւն առած ըլլալու է , եւ սոսմսերը հրապարակ հանելէ առաջ , անոր բաժանուելով զբաղած կրնան ըլլալ հոգ չէ թէ՛ այդ գործը ստանձնողին նուիրական կարեւոր վնասներ հասնին :

Ասկէ տարբեր ինչ կ'սկսած կարելի էր սնուցանել . . . :

Գաբրիէ 16 Յուլիս 909

**Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Է Ն**  
**ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՍԱՆՆԵՐՈՒՆ**

Երեսօղէմի հայոց Ս . Յակոբեանց վանքէն ահագին թալանով ի գիշերի փախուստ տուող , բարոյապէս վտաւսերուած գող ազգակներ , կուսպիղծներ , մատնիչներ , վիթխարի եւ ումիկ եսականներ , ազգին մորթին վերայ փակած ու ատով ապրած կուսակցամոլ մակարոյժներ եւ վերջապէս ամբողջովին փտած վեղարաւորներ , ահա՛ կան , ու կ'պատասխարուն Պօլսոյ Սրբազան մատուցող եւ որ է՛ն ցաւալին է՛ բացարձակապէս կը սոստապանուին ամենէ անողոք ու ամենէ շարաղէս ա՛յս թշնամիները Ս . Յակոբ վանքին , որք՛ լայնօրէն տիրացած , երեսփոխանական հոգիին , հոն համարձակօրէն ու անզարգում կ'գործեն վերջնական աւերումը եւ ստրկութիւնը՝ ազգին նուիրական եւ առանձնաշնորհալ զարուստ հաստատութեան մը՝ փա՛ռք ի վաճառելու եւ պատիւ երեսփոխաններուն . . . : Նորընտիր Պատրիարք Տ . Տ . Եղիշէ Դուրեան Սրբազան Արք . Եպիսկոպոսի խնայելի հօր եւ կենարար շունչին պէտք կայ , որպէսզի աչքկապուել չ'ընին , այլ՝ փախստական վարդապետաց ամեն խորամանկութեանց եւ գաւաղուածեանց ընդդէմ՝ — երեսփոխանական ճակատներն ու մոլորած սիրտերը նորին Բարձր Սրբազանութեան մօտենան , զայն հասկնան եւ մեծ ու աղնուական նըկարագիրներով երեւնալով՝ արժանի հանդիսանան հասարակաց պաշտամունքին եւ ո՛չ թէ՛ — պաշտպանեն խուլակոյրօրէն սատանայի ողիով թրծուած՝ փիտութեան մարմնացում խնայելի մը՝ յափշտակիչ , դատաւիչ , փախստական . . . : Իզմիրեանական ազդեցիկ ու թելադրական կողմնակցականութիւն մ'է ասիկա , որմէ ամենէն աւելի երեսփոխանութիւնը զօրազարար եւ այդ աւազակաց խումբը բարեխախտաբար պիտի տուժեն . . . : որովհետեւ այն կողմնակցութիւնը զոր երեսփոխանները կը փորձեն , ահագին կսկծեցնող պատրանք մը թերեւ ըլլայ իրենց համար եւ զարհուրելի դատապարտութիւն մը այդ մարդակերպներուն համար , հակառակ Հայրապետական բոլոր քաջախերոզ բուրմունքներուն եւ հրապոյրներուն երեսփոխանաց շնորհալիութեամբ քօղարկուած ուղիղաբանութեան . . . : Երկու տէրանց ո՛չ կարէին ծառայել . — թէ՛ հաճոյակատար ինչեւ թէ՛ արգարադատ միանգամայն՝ այդ անկարելի էր , զի երկու ճամբաներն էլ միմեկին չեն տանիր . — կամ մին եւ կամ մեւոր կիշնար ընտրել . — երկրորդ ճամբան Սրբազան կը՝ տանէր . զոր շունչին հոն սկսեալիցեաններ եւ հետեւաբար՝ երկրորդն ընտրեցին , որ ճիւղակնօրէն կանխամտածուած , յղաղուած ու կերտուած՝ — անպատճառ խեղաթիւրելու ջանքերով , դատապարտելու ճշմարտութիւնը , եւ արդարացնելու կուսպիղծութեան , գողութեան , մատնութեան եւ ինձնազոքութեան թիւնները — եսական թաղծութիւն մ'էր . հօր եւ թելադրական գաս մը՝ զոր պարտ էին առնել , հրապարակ նետել եւ զորձաբերել . . . : Բայց այժմ որ երկաթեայ վարպետը , փոխուած է զուտ ոսկիէ՛ վապետով , ու զեռ երկուսան քանդուած օժանդներուն արիւնտա մուխը աչքերնուն մէջն է . . . : ընդդէմ Երեսօղէմի բռնի եւ արուեստակեալ սկսեալութեան մը մէջ պիտի յամառին զեռ ու ազգային մտահոգութիւններէ իրենց ձեռնպահութիւնը արգարացնեն . իրենք , իրենց ամբողջ մասնունքը , իրենց հոգիին բոլոր վե-

ՄԵՐՍԵՏԷՍ

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՅԷ



# ՄԵՓԱՎԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

ՅԱՏԿԱՆԵՐ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել սրբաշատ ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժրտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻ

հանձն ոյժերը, իրենց բոլոր տեղիքերը արեւուն հեղեղի մէջ ընկղմած Հայ-րենիքին թող նուիրեն : Հայրենիք մը՝ զոր մտայն կ'ճանչեն և թող ստան օձիքը Ս. Յակոբ վանքին՝ զոր բնույթն ճանաչելու իրականացնելու որ՝ մասնաւոր միջոցներէ այժմ մաքրուած ու խաղաղացած չ'պահանջելու՝ բոլոր եթէ կրկին երկպառակտելով չ'նետնել Տեսա-որն-Նորոր Առաքելական Աթոռը, որուն պարտքը՝ հաշուեպահանջ վախճանական-ներուն երեսն զիջուած ու չնդապատու-կուած, սակաւ միջոցի մէջ, - առանց ծանրանալու ազգային և ոչ մէկ անհատի վրայ - կ'զոցուի փառաբանական Մասնաւոր՝ երբ շուտ հասնին, շարամբ-տօրէն վտարուած ու յանձնարար զբր-պտրտուած իր երկու հաւատարիմ եւ բազմազան միաբանները՝ Սրէզեան Տ. Գեորգ Արք-Նախկինոյս և Մաք-սուտեան Տ. Անտոն վարդապետ, և անկազակած կ'վերստանայ իր նախան-ձիլի նախկին բարձր ու վեհապանծ զիբքը և բարոյակէս ու նիւթակէս շէն վիճակը . Ա՛լ բաւական է . Գե-որգն և Անտոնը ա'նպատճառ անուա-նարկել ու մեղապարտել յանձնարար-ուած, չեղուած ու հրամայուած քըն-նիչ Յանձնարար անուն ամէն մաս-նագիտեան, - ազգին երեսին նետած ծուռ ու մուռ . խաղք ու խայտառակ տեղեկագիրներն մէջտեղն է ոտքը կը-րած . ամօթ իրենց որ Ազգ . երեսի-խան ալ են այնպիսի ատեն մը՝ ուր ա-մէն անը ազատութիւն և արդարու-թիւն կը հնչեն և ոչ թէ հին բէթմի-բանագիտութիւն . ապա ուրիմ պար-տինք համբուրել 1907 Փետր . տեղե-կագիրն, և պաշտել հեղինակներն՝ ու հետեւաբար չ'ընդունել ընտել նոր որ կիրք կ'հասի . և ըսել թէ զժգարդ ազ-գը, ա'յս տեսակ պատուաճանաչ և ա-մէն հասանքէ մղուող ու խեղճուող իր ընտրելիներէն - յարգելով բացառու-թիւնները - պիտի սպասէ՝ եղբր իր փրկութիւնը . . . վա'յ քեզ հայ ազգ, զի երեսիխանք յո համակերպողք են . . . ամէն գործարարի վիճա-բանութիւններէ և Շահրիկական ալա-մօս կանոնագիրներէ աւելի ազգեցիկ ու թիւղբակաճ է՝ կուզենք հաւատար-Գուրեան Սրբազան Պատրիարքը, որ իրականացուած եղած է միշտ ճշմարիտ բարի և անկողմնակալ՝ զեղեցիկ ու բարձր իտէլի մը . . կը կրկնենք . այս իտէլիին հոգի և կենարար շուն-չը պէտք է, որպէսզի մտքէ հաշուա-կան ինքնագիտ կցկցանքները . - Ե-րուսաղէմատունէն վաճառ, վաճառքն թախանով փախտական՝ յերուսաղէմ, ի Ռէմէ, ի Յոպէ, ի Մերսին, յիդ-միթ և այժմ բուն իսկ ի Պոլիս՝ վրի-ժառու բուն կիրքով մողովուրդը զբր-զոցող օտար հանող և անուր շարիքներ գործող, թախտաշրջիկ (միւթէշէր-բիտ) անիծից արմատ զեղծարարները՝ մերժէ նոր տեղեկագիրը և ընդունէ ինքը . - պահպանէ՝ վաճառործան բըռ-նաբարուձէ երուսաղէմի Պատրիարքա-

կան Աթոռոյն անկախութիւնն ու ա-զատութիւնը . - զօպէ՛ նորա նուիրա-կանութիւնը աղարտելու և իրաւա-սութեանցը միջամտելու բնոյթը և նշանաբանը կրող ամէն սունձգու-թիւն . - սանձէ՛ ու պապանձեցնէ՛ ծե-րունագարդ Փահակալին դէմ վիրաւո-րիչ և անպաշտած՝ Բիւզանդական ա-մէն ամբաստանութիւններ, նմանա-պէս իւր հօտին հասցէին ա'յնպիսի անհեթեթ զրպարտութիւններ, որք ամուլ չ'մնալէ զատ, կարող են սաս-կապէս զրդուել մողովուրդը, մասնա-ւանդ՝ ներկայ տնտեսական կացութեան մէջ և հետեւաբար ի կարգ հրաւիրել զԲիւզանդ՝ որոյ ամբողջովին սուտ ա-նիծանալի բանասրկութիւններն ու քառթիւնները, թարգմանաբար պիտի հաղորդուին անղական կատարու-թիւն ի նախազգուշութիւն, զի քա-վառաշրջիկ կոչուածներն ամէնքն այ՝ Բէշեանական են բարեբաղդարար, և իրենք են որ չընտրելով իր զըլլային և զիս կըլլան՝ փախտականներուն թախանած կողոպուտէն . մինչդեռ հի-մայ՝ իրպէս՝ ոչ արտ ծախող կայ և ոչ ալ շորթող կամ խորող . . . և ըզ-գուշացնէ՛ վերջապէս զԲիւզանդիոն յախուռն ընթացքներէ և խրատէ՛ լի-նել խոհեմ ու շրջանայեաց . ոչ սը-տախտութիւնը, ոչ զրպարտութիւնը և ոչ մի բան կրնան ճշմարտութիւ-նըն աղաւաղել . . . անպարտ է միշտ Սրէզեան Սրբազան - զեղծարար չէ՛ բնու Մաքսուտեան վարդապետ . . . Մաղթենք որ, Ամեն . Տ . Տ . Գուրեան Եղիշէ Սրբազան Արք-եպի-սկոպոսի անուրը, կեանքն ու գործը, սիրուած խորհրդաշնչան մը ըլլայ բո-լոր հայ սրտերուն մէջ, յիշեցնելու մեղի, ամենուս որ մեծ ու վսեմ Պատ-րիարքներ կ'ան Ազգային շրջանակին մէջ . . . (Երուսաղէմ) ԲԱԹԻՊ

**ՍԱՍՈՒՆ**  
ՊԱՏԿԵՒԱԶԱՐԴ ԱՐՄԱԹԵՐԻԹ

Ստացանք Վատուճի երեք թի-ւերն ճոխ բովանդակութեամբ : Էջ 48 ութամալ :

Տնօրէն Խմբագիրն է Տիար Տիգրան Սիւրբեան, Անգամ՝ Դի-ւանի Օսմ . Նախաձեռնարկ Ընկե-րութեան և Ուսուցիչ Հայերէնի և Առևտրական Այլարհաբարութեան :

Չատ յօդուածներով պիտի խօ-սինք Վատուճի պարունակութեան մասին : Բաժնեգինը Պոլսոյ համար 20 զրշ . Գաւառաց համար 30 զրշ .

Հասցէն է՝  
Rédaction de la Revue « Sas-  
soun » Bahdjé Capou, Yaldis Han  
5-8 CONSTANTINOPLE

**ՄԻՆԿԸՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿՍՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պատմութիւն փողոց . Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱԿԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՈՍՆԱԶԻԻՂԵՐ ՈՒՆԻ

Այլարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրնէրն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 հ աւելի վիսյակաւ և մեքանիզմով վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ


ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախնդիսին մէջ ստացած է :  
ՀԱՅԹԱՅԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ  
ՀԱՅԹԱՅԻՉ ԱՆԿՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿՍԸ  
ԱՅՍԵՐԱԿՍԸ ԱՐԲՈՒՆԻԲԻՆ  
ԵՒ ԲԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ  
ՀԱՅԹԱՅԻՉ Ե . Բ . ԽՏԻՂԱԿԱՆ ՏԱՆ

Զրի դասեր և նորոգու-թիւններ, ՄԻՆԿԸՐ մեքենա-յից համար, յաճախորդա-տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ԳՐԻԿՈՐ ԶՈՀՐԱՊ

**ԽՂՃՄՏԱՆՔԻ ՉԱՅՆԵՐ**

Մտա 100 էջերէ բաղկացած «ԽՂՃՄՏԱՆՔԻ ՉԱՅՆԵՐ» գրքիցը, որ զանազան նիւթերու վրայ կեանքի գրուածներ կը պարունակէ, Հեղինակին պատկերով, և ընտիր թուը-թի վրայ տպագրուած է Պոլսոյ մէջ .

Հեղինակը՝ Գրիգոր Զոհրապ, Տպագրական բոլոր ծախքերը ընե-լով, ամբողջ հատոյթը յատկացու-ցած է Առանայի Հայ արկածեալիե-րուն :

Գինը, թուրքիոյ համար 5 զրշ . է, 40 կոպէկ, 25 Սէնթ, 1,25 ֆր . և կը ծախուի Պոլսոյ բոլոր գրավա-ճառներուն քով : Գահիրէ՝ զիմեւ Հայոց Օրճարանի Տնօրէններուն :

**ԱՍՏ ՆԱՄԱԿ**

«Արշարյս» ի բաժանորդներուն կը խնդրուի մեր մինչև ցարդ չ'վճարող բայց յարգելի բաժանորդ-ներէն, որպէսզի բարեհաճին առանց մեր ուղղակի դիմումին սպա-սելու, իրենց բաժանակիները զրկել

Rédaction du Journal ARCHA-  
LOUYCE հասցէով :

**ԳԻՒՐՈՒԹԻՒՆ**  
**ԳԻՒՐՈՒԹԻՒՆ**

Ալ հող մի՛ ընէք թէ՛ ձեր կարի մե-քենաները Շայնայի մը գլխուն վրա-գրած հոս ու հոն պիտի փոխադրէք նո-րոգելու համար :

Պ . Սարգիս Թաշեան իրեն դիմող շատ մը յաճախորդներին քաջալերուած, ատենէ մը ի վեր իր պաշտօնը թող-լով, յատուկ կտոր պատրաստած է և իր շրջուն ու շարժական խառնութիւն «Վա-րօն» ին (անոր պարիկ ձիուն անունն է) բարձած ամէն թաղէ կանցիկ ամէն օր և ամէն մաս :

Զինքը ճանչնալու գծուարութիւն չկայ, Պարիկ ձիուն մը քաջած կտա-քին վրայ կըր մեքենաներու գործիք-ներ տեսնէք, որուն շրջա կողմը ա-մեն լեզուով գրուած է, մասնաւոր Réparation des Machines, անմիջապէս կ'ա՛մ «Վարօն» յիշեցէք, և կ'ամ քիչ մը անցին Սարգիս Թաշեանը տես-նել ուղեցէք, իր կապոյտ կտառէ բոստային մէջ : անիկայ ոչ միայն կա-րի մեքենաներու նորոգութիւն կը-նէ աննման յաջողութեամբ և երաշ-խաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ :

Չ'մոռնա՛ք նաեւ կազմ վաճարան-ներու և ֆոֆոկրաֆներու նորոգութիւ-նը և նորերու հայթայթումը :

Պ . Թաշեան այս դիւրութիւնները ընծայելով իր նմաններուն ծառայած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունե-նայ, և քիչ մ'ալ գրամ շահիլ պիտի ուզէ . իր պիտակիներուն դաստիա-րակութեանը յատկացնելու համար :